

ԱԿԱԴԵՄԻԱՆՈՍ ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՅԱՆԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ոչ միայն ուրարտագիտությունը, այլև հինարևելյան սեպագիր քաղաքակրթության ուսումնասիրությունը կենտրոնական տեղ է գրավում ազգ. Գր. Ղափանցյանի ռադակալողմանի, գիտության համար այժմ ևս առաջնակարգ արժեք ներկայացնող աշխատություններում: Ականավոր արևելագետի ու հայագետի այս քնազավառի ստեղծագործական աշխարհը ուրվագծելու համար կարելի է հիշատակել նրա «Ասսուրա-բարելական բառեր հայերենում», «Общие элементы между хеттским и армянским языками», «Хай-аса — колыбель армян», «Суффиксы и суффиксированные слова в топонимике древней Малой Азии», «Хурритские слова армянского языка», «Историко-лингвистическое значение топонимики древней Армении», «Ուրարտուի պատմությունը» և քաղաքի վրա աշխատություններ, որոնք վիթխարի նպաստ են բերել հինարևելյան քաղաքակրթությունների պատմության ուսումնասիրությանը:

Այնպես որ ազգ. Գր. Ղափանցյանի Հին Արևելքին վերաբերող աշխատությունները ըստ ամենայնի ներկայացնելու համար կարելի է ամբողջական գրքեր գրել այդ մասին: Ըստ որում ամենևին սահմանափակ չեն նաև ուրարտագիտությանը մատուցած նրա ծառայությունները: Ուրարտուի պատմության և բանասիրության մեջ համարյա թե չկա որևէ փոքրիշատե ակնառու բնագավառ, որը տեղ գտած չլինի միջազգային ճանաչում վաստակած գիտնականի աշխատություններում՝ ռազմա-քաղաքական պատմություն, թե՛ տնտեսություն, սոցիալական հարաբերություններ, թե՛ կրոն, սեպագիր աղբյուրների վերծանություն, թե՛ մեկնաբանություն, Ուրարտուի տոպոնիմիկայի, թե՛ ուրարտերենի քերականության ու բառապաշարի ուսումնասիրություն և այլն, և այլն:

Մի հոգվածում, քնականաբար, անհնարին է կանգ առնել ականավոր գիտնականի նույնիսկ միայն ուրարտագիտությանը վերաբերող ստեղծագործություններում արծարծված բոլոր խնդիրների վրա: Այդ պատճառով էլ ստիպված ենք առայժմ սահմանափակվել պրոֆ. Գր. Ղափանցյանի աշխատությունների սոսկ այն կարևորագույն նորույթներով, որոնք նպաստել են ուրարտագիտության առաջընթացին:

Անվանի արևելագետ-հայագետը զգալի ջանքեր է գործադրել, առաջին հերթին, ուրարտերեն սեպագիր լեզվի ուսումնասիրությանը: Ըստ որում իր պրպտումները այստեղ նա կատարել է համակողմանի, խորամուխ լինելով այդ լեզվի բոլոր ծալքերում՝ և՛ հնդեվրոպական բառեր-արմատներ տեսնելով ուրարտերենում, և՛ ուրարտա-խեթական ու ուրարտա-խուրրիական ընդհանրություններ բացահայտելով, և՛ ակկադերենի ազդեցությունը նշմարելով ուրարտերենի վրա: Եւ, որ մեզ համար առավել կարևոր է, մանրազնին հեռազոտելով ուրարտա-հայկական լեզվական ընդհանրությունները:

Այսպես, Գր. Ղափանցյանը միանգամայն համոզիչ փաստերով ցույց է տվել, որ ուրարտերենի անանցողիկ բայերը բայական -a- ցուցիչով և անցյալ կատարյալ ժամանակի 3-րդ դեմքի -bi վերջավորությամբ լիովին համընկնում են հայերենի համապատասխան բայական ցուցիչի և վերջավորության հետ: Հմմտ. ուրարտերենի nunabi «եկավ», uštabi «ճանապարհվեց,

արշավեց», ulabi «ուղևորվեց» և հայերենի «տեսաւ» «մեծացաւ» քաղմեցաւ» և այլն: Նա միաժամանակ նկատել է, որ ուրարտերենի թեմատիկ ա-ն շեղոք սեռի բայերում այսօր էլ նույն ձևով առկա է հայերենի որոշ բարբառներում: Հմմտ. «ծխել» և «ծխալ» «թվել» և «թվալ» և այլն: Ի դեպ, միևնույն արմատով անցողիկ և անանցողիկ բայեր կազմելու երևույթը, հայերենի նման, լայն տարածում է գտել սեպագիր ուրարտերենում: Հմմտ. uš(i)- «ճանապարհել, ուղարկել, նվիրել» և uš(a)- «ճանապարհվել, արշավել», si(u)- «բերել» և si(a)- «գալ», u(i)- «ուղևորել» և ul(a)- «ուղևորվել» և այլն: Նույնը կարելի է ասել ուրարտերենի և հայերենի սեռական հոլովի միևնույն i/ի վերջավորություն մասին:

Ինչ վերաբերում է ուրարտա-հայկական բառապաշարային ընդհանրություններին, ապա ակադ. Գր. Ղափանցյանը, քաջատեղյակ լինելով ժամանակի մասնագիտական, մանավանդ արտասահմանյան օտարալեզու գրականությանը, ինչպես նաև սեպագիր ուրարտերենին, գրաբարին և հայերենի քաղմաթիվ բարբառներին, իր աշխատություններում, մի կողմից, ամփոփել է արդեն հայտնի նյութը, մյուս կողմից այն համալրել իր սեփական, մեծ մասամբ համոզիչ, մտահղացումներով: Ծվ արդյունքը եղել է այն, որ սկզբում «Ուրարտուի պատմություն», իսկ ավելի ուշ «Հայասան հայերի բնօրրան» աշխատություններում անվանի արևելագետը ներկայացրել է մոտ երեք տասնյակ ուրարտա-հայկական բառապաշարային ընդհանրություններ՝ aoli- աւել, ebaui- աւառ, euri-ewri աւրի (աւրեար-օրեար, աւրեանք-օրեանք և աւրիորդ-օրիորդ բառերում), Inukani-ինքն, ul-ուղի, udui-տուի (վայրի խաղող), sani — սան(կաթնա), arm-uzi «սերմ, սերունդ» — արմզարմ, pahni — պահրէ (խոշոր եղջերավոր անասուն, իսկ գրաբարում՝ եղջերու), sue — ծով, pill — շրանք — պեղ-եմ, ulguše — «կյանք», «ողջություն» և այլն<sup>2</sup>:

Գր. Ղափանցյանի հաշվումներով, այն ժամանակ գիտությունը հայտնի շուրջ 400 ուրարտական բառարմատների մոտ 5 տոկոսը համընկել է հայերենի հետ: Տոկոսային այդ հարաբերությունը, սակայն, նրա կարծիքով կարող էր աճել, եթե բացահայտվեին ուրարտերեն բոլոր բառերի իմաստները: Ականավոր գիտնականի ուրարտագիտական ստեղծագործություններից մեզ բաժանում է զգալի ժամանակահատված՝ շուրջ չորս տասնամյակ: Հետագա պեղումների և հետախուզական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են սեպագիր նոր աղբյուրներ, ուստի զգալի չափով հարստացել է ուրարտերենի մեզ հայտնի բառապաշարը, իսկ ուսումնասիրությունները հաստատել են նոր բառիմաստներ, այդ թվում ուրարտա-հայկական լեզվական նոր ընդհանրություններ: Կուտակված ամբողջ նյութը և հետազոտությունները ամփոփելու, ինչպես նաև սեփական քաղմաթիվ մտահղացումները գիտական շրջանառության մեջ դնելու տեսանկյունից զգալի հետաքրքրություն է ներկայացնում ակադ. Գ. Ջահոկյանի արժեքավոր հետազոտությունը՝ «Ուրարտական փոխառությունները հայերեն լեզվում», որը լույս է տեսել Լենինգրադում՝ ակադ. Բ. Բ. Պիոտրովսկու տարելիցին նվիրված գիտական աշխատությունների հոբելյանական ժողովածուում<sup>3</sup>:

Ի դեպ, հիշյալ ընդհանրությունները արգասիք են պատմական այն հանրահայտ իրողության, որ հնդեվրոպական հայերը ի հնուց անտի ապրել են Ուրարտուի տերիտորիայում և շրջակա երկրներում<sup>4</sup>: Ուստի ամենևին էլ

<sup>1</sup> Տե՛ս Գր. Капанця́н, Хайаса — колыбель армян. Ереван, 1948, с. 214.

<sup>2</sup> Տե՛ս Գր. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը. Երևան, 1940, էջ 37—40: Գր. Капанця́н, Хайаса..., с. 214—217.

<sup>3</sup> Տե՛ս Գ. Բ. Джаукян. Урартские заимствования в армянском языке.—Культурное наследие Востока, Л., 1985, с. 364—372.

<sup>4</sup> Տե՛ս Կ. Բ. Гамкрелидзе, В. Բ. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы I—II, Тбилиси, 1984.



պատահական չէ ուրարտերեն բառերի հանդես գալը հնդեվրոպական հայերենում ե, ընդհակառակը, հայերենի բառապաշարի առկայությունը ուրարտերենում:

Ուրարտերեն լեզվի ու նրա բառապաշարի հետազոտության բնագավառում ակադ. Գր. Վափանցյանի դիտարկումները չեն սահմանափակվում վերը հիշատակված փաստերով: Նրա աշխատություններում ամենուրեք հանդիպում են այլ կարգի նոր ընթերցումներ, մեկնաբանություններ, ստուգաբանություններ: Այդ տեսակետից զգալի հետաքրքրություն է ներկայացնում ուրարտական արձանագրությունների *aldubi* «զցեցի» բայի մեկնաբանությունը, որը սովորաբար հանդես է գալիս *'aldubi meš.ši pi* «հարկի տակ զցեցի» բառակապակցության մեջ և հավաստում է այն, որ ուրարտական թագավորները նոր երկրներ նվաճելուց հետո նրանց կառավարիչներին հարկատու են դարձնում վանի թագավորությանը: Հիշյալ մեկնաբանությունը Իր. Վափանցյանը ոչ միայն համակողմանի հաստատում է ուրարտերեն տեքստի հիման վրա, այլև տառացիորեն այդ նույն ոճը արդարացիորեն տեսնում է հայ հին գրականության՝ «ընդ հարկաւ (հարկօք) արկանել» արտահայտության մեջ:

Հինարևելյան սեպագրերի ականավոր մասնագետը ջանքեր է գործադրել նաև ուրարտական արձանագրությունների եզրափակիչ՝ անեծքի բանաձևերի ուսումնասիրությանը, ուր նշում էրի առարկա են դառնում այն անձինք, ովքեր կհանդգնեն այդ քարակոթողները ոչնչացնել, տեղափոխել, հողի մեջ թաղել, ջուրը նետել և այլն: Այստեղ Գր. Վափանցյանի ուշադրությունը առանձնապես

պես գրավել է *aluše A<sup>meš</sup> hušulie* «ով ջուրը (տառացիորեն՝ ջրերը) զցի» արտահայտությունը, ուր նա ուրարտերեն *hušulie* բայարմատի մեջ իրավացիորեն տեսնում է հայերենի «հոսել» բայի արմատը: Իբրև իր այդ տեսակետի հաստատում նա բերում է այն կարևոր փաստը, որ հին հայերենում «հոսել» բայն ունի նաև «ցած զցել» իմաստը: Եվ, իսկապես, մեծանուն հայագետ ակադ. Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» «հոսել» բայը կոնկրետ փաստերով ներկայացված է նաև «թափել», «վերևից ցած զցել», «գահավիժել» իմաստներով: Այս բոլորը աներկբա վկայում է այն մասին, որ ուրարտերեն *huš* բայի Գր. Վափանցյանի կողմից առաջարկված «հոսել» ստուգաբանությունը ըստ ամենայնի ճիշտ է արտահայտում իրերի վիճակը և հնարավորությունն ընձեռում կենդանի հայերենի միջոցով պարզելու մեծած ուրարտերենի բայիմաստը:

Գր. Վափանցյանին է պատկանում նաև ուրարտերեն *gunguše* «մարտ» բառի առաջին ճիշտ թարգմանությունը, որը նա առաջարկել է Ռուսա I-ի նոր Բայազետի սեպագիր արձանագրության հրատարակության ժամանակ: Այդ բառը ուրարտական արձանագրություններում, մեծ մասամբ տարեգրություններում, սովորաբար հանդես է գալիս նվաճվող երկրների արքայանիստ քաղաքների (*URU LUGÁL-nusi*) համար մղված համառ մարտերի նկարագրության մեջ, ուր ասվում է, որ տվյալ քաղաքը ամրացված է եղել և նվաճվել է մարտերի շնորհիվ (*agununi manu gunguša haubi*): Այժմ *gunguše* բառի «մարտ, ճակատամարտ» թարգմանությունը ոչ մի կասկած չի հարույցում, քանի որ այն արդեն ստուգված է նաև Ռուսա I-ի Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության տվյալներով, ուր ասորեստանյան զուգահեռ տեքստում ուրարտերեն *gunguše*-ին համապատասխանում է *luqunu* նույնիմաստ բառը: Եվ պատահական չէ, որ ուրարտագիտական բոլոր աշխա-

5 Տե՛ս. Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 3, Երևան, 1977, էջ 115:

6 Տե՛ս Գր. Վափանցյան. Նոր-Բայազետի սեպագիր արձանագրությունը. Երևան, 1930, էջ 13, ծան. 3: Գ. Ա. Капанцян. Историко-лингвистические работы (այսուհետև՝ ИЛР). II, Ереван, 1975, с. 33, прим. 2.

տություններում, այդ թվում ուրարտական արձանագրությունների լիակատար ժողովածուներում Գր. Ղափանցյանի կողմից *gusuše* բառին տրված թարգմանությունը այժմ աներկբա ընդունվում է: Ի դեպ, այն նպաստում է ռազմաքաղաքական բնույթի ուրարտական արձանագրությունների լիարժեք ուսումնասիրությանը:

Նվաճողական բնույթի ուրարտական տեքստերի ճշգրիտ ընկալմանը օգնում է ականավոր արևելագետի կողմից առաջարկված *uštipe* բառի թարգմանությունը ևս: Այդ բառը և նրա տարրերակը՝ *uštīpti*-ն ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպում է ընդամենը երկու անգամ՝ Սարգուրյան տարեգրության և Ռուսա I-ի Մովինարի արձանագրության մեջ: Հենց այդ հազվագյուտ գործածությունն էլ ժամանակին խոչընդոտել է բառի մաստի ճշգրիտ ընկալմանը: Սակայն Գր. Ղափանցյանը, բավական սուղ նյութի պայմաններում, իրեն հատուկ խորաթափանցությամբ, *uštipe* գոյականի *ušt-* արմատը տեսել է *uštāli* «արշավեց» բայարմատի մեջ և տվել նրա միանգամայն համոզիչ՝ «արշավանք» թարգմանությունը<sup>7</sup>: Այդ թարգմանություն համաձայն, Սարգուրյան տարեգրության մեջ խոսքը վերաբերում է

Ուխտերուխի երկրի երեք անհնազանդ փոխարքաների դեմ (<sup>LÜ</sup>EN.NAM<sup>MEŠ</sup>) երեք առանձին արշավանք (*uštipe*) ձեռնարկելուն, իսկ Ռուսա I-ի Սևանի հարավային ափին գտնվող ժայռագիր արձանագրության մեջ՝ մի շարք երկրներ մեկ արշավանքի (*šusini uštīptini*) ընթացքում նվաճելուն: Ականավոր արևելագետի այդ կարևորագույն մեկնաբանությանը Գ. Մելիքիշվիլին հատուկ անդրադառնում է ուրարտական արձանագրությունների իր կազմած լիակատար ժողովածուի բառարանում<sup>8</sup>: Այդ մեկնաբանությունը հետագայում մեզ ևս հնարավորություն է ընձեռել *uštādi* (նաև *uštūni*) և *uštipe* արդեն հայտնի համադրության հիման վրա Ռուսա II-ի Կարմիր բլուրում հայտնաբերված ծավալուն արձանագրության մեջ առաջարկելու *meruni* բայի և *meripte* գոյականի համադրությունը<sup>9</sup>, որոնց իմաստները, սակայն, առայժմ դժվար է կոահել:

Ուրարտագիտության համար կատարյալ հայտնագործություն էր Գր. Ղափանցյանի կողմից Մենուայի Շուշանց դյուզի (այժմյան Կեվենլի, Վանից հարավ-արևելք) արձանագրության *E tuluri[ni?]*-ի նույնացումը խորխորյան տարեգրության *É·GAL<sup>MEŠ</sup>-ri-a*-ի հետ և նրա մեկնաբանությունը որպես «ամրոց», «դղյակ» (*<dull-ak?*)<sup>10</sup>: Այս հայտնագործությունը հսկայական հետաքրքրություն է ներկայացնում մի շարք տեսակետներից:

Նախ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում ուրարտերեն «ամրոց» բառը, որը արձանագրություններում սովորաբար հանդես է գալիս շումերական *É·GAL* գաղափարագրով (տառացիորեն՝ «տուն մեծ») և համապատասխանում է ակկադերեն *ekallu* «պալատ» բառին՝ ի տարբերություն *birtu*-ամրոցի, որը նույնական է հայերեն «քերդի» հետ: Այդ գաղափարագիր *É·GAL*-ը ուրարտագիտության մեջ մինչև օրս համարվում է սոսկ «ամրոց», որի հետևանքով, չգիտես ինչու, իսպառ անտեսվում է «պալատ» բառի անկախությունը ուրարտական սեպագիր աղբյուրներում:

Այստեղ արժե որոշ ճշտում մտցնել Մենուայի Շուշանցի արձանագրության նախկին *É tuluri[ni]* ընթերցման մեջ՝ *É* «տուն» գաղափարագիրը

<sup>7</sup> *Sh'v* Գր. Капанцян. Новая халдская надпись Русы I из Келан-крана, Ереван, 1931, с. 7. նույնի՝ ИЛР, II, с. 31.

<sup>8</sup> *Sh'v* Դ. А. Меликшвили. Урартские клинообразные надписи, М., 1960, с. 413.

<sup>9</sup> Н. В. Арутюнян. Новые урартские надписи Кармир-блур, Ереван, 1966, с. 26—27.

<sup>10</sup> Գր. Ղափանցյան. Ուրարտի պատմությունը, էջ 67:



փոխարինելով «տուն» դետերմինատիվով (որոշիչով) և *ṣulurī*[...] տուժած բառի վերջում վերականգնելով ոչ թե *-[ni]*, ինչպես դա մինչև օրս արվել է, այլ *-[a]*<sup>11</sup> նկատի ունենալով, որ խորխորյան տարեգրության *É·GAL<sup>MES</sup>* դադափարագիրը ունի *-ria* հնչյունական լրացումը: Կարծում ենք, որ այս *ṣuluria-ի* և *É·GAL<sup>MES</sup>-ria-ի* հետ անմիջական կապ ունի նաև Ռուսա II-ի Ադիլչևադի (հայկ. Արծկեի) մի պահասավոր արձանագրության մեջ երկու անգամ հանդիպող *E·GAL* դադափարագիրը *-a* հնչյունական լրացմամբ (*E·GAL-a*):

Գր. Ղափանցյանը միանգամայն իրավացի է, երբ Մենուայի Շուշանցի արձանագրության մեջ նույնացնում է *ṣuluria-ն* և *E·GAL-ը* (իսկ Գ. Մե-լիքիշվիլին իջուր է դրանք տարբեր օբյեկտներ համարում), քանի որ արձանագրության վերջում հատուկ շեշտվում է, որ ուրարտական թագավորը տվյալ դեպքում կառուցել է և՛ *É·GAL*, և՛ քաղաք: Դա նշանակում է, որ արձանագրության երրորդ տողի այս *E·GAL-ի* տակ անկասկած ենթադրվում է հենց առաջին տողի *ṣuluria-ն*: Ինչ վերաբերում է երկրորդ տողի *E·GAL badusi-ի*, ապա Մենուան այստեղ պարզապես ճշտում է, որ իր կառուցած *ṣuluria* շենքը ոչ թե սովորական, այլ հոյակապ (*badusi*) պալատ կամ ամրոց է:

Գր. Ղափանցյանի այդ կարևորագույն հայտնագործությունը, ցավոք, մինչև օրս անտեսվել է ուրարտագիտության մեջ, ի դեպ, կարծում ենք, որ այն ոչ թե ընդունելություն չի գտել, այլ ավելի շուտ մնացել է սովերի տակ սոսկ այն պատճառով, որ ուրարտական արձանագրությունների ժողովածուների հրատարակիչները և այլ հետազոտողներ հարկ եղած շահով չեն օգտվել հայերեն զրականությունից: Չմոռանանք ասել, որ դրանց «սպաստել» է նաև անվանի արևելագետի աշխատությունների մեծ մասի անհրաժեշտ անվանացանկերով օժտված չլինելու հանգամանքը: Ցավոք, այդ նույն ձևով է վերահրատարակվել նաև հետազայում նրա «Историко-лингвистические работы» երկհատորյակը:

Գր. Ղափանցյանի վերոհիշյալ հայտնագործությունը տեղիք է տալիս այլ կարգի, նույնպես ոչ պակաս կարևոր, մտահղացումների: Ուրարտական արձանագրություններում, օրինակ, հանդիպում են *zaše*, *zasill*, *zašubī* և *zašūall* բառեր: Դրանցից առաջինը, ակնհերևարար, գոյական է, երկրորդը՝ առաջինի հոգնակի ձևը, իսկ վերջին երկուսը միևնույն *zaš-* արմատից կազմված բայաձևեր են: Ի դեպ, *zaše* գոյականը հանդես է գալիս Ռուսա I-ի Թոփուզավայի երկրեզվյան արձանագրության մեջ և համապատասխանում է ասորեստանյան տեքստի *lūu* ին, որը նշանակում է «ուժ, զորություն, ամրություն»<sup>12</sup>, Մեզ թվում է, որ վերոհիշյալ *zašill-ն* հանդիսանում է *É·GAL<sup>MES</sup>-šill* և *É·GAL<sup>MES</sup>-asill-ի* համազորը ճիշտ այնպես, ինչպես Գր. Ղափանցյանի առաջարկած *ṣuluria-ն* և *É·GAL<sup>MES</sup>-ria-ն*: Մի խոսքով, դուցե դեռևս վաղ է կտրուկ հետևություններ անել այդ մասին, սակայն կարծես թե փաստերի ճնշման տակ հուսո ճառագայթներ են նշմարվում ուրարտերեն *ṣuluria* և *zaše* բառերի մեջ տեսնելու «պալատ» և «ամրոց» իմաստները:

Ակադ. Գր. Ղափանցյանի հինարևելյան գիտությանը (նաև հայագիտությանն ու վրացագիտությանը) բերած նորույթների շարքում յուրահատուկ

<sup>11</sup> St' W. von Soden. Akkadisches Handwörterbuch. Band 1 Wiesbaden, 1965, S. 557.

<sup>12</sup> «Հանդես», № 1

արժեք է ներկայացնում նաև խուրիներեն *ewri-*ի և ուրարտերեն *ewri-*ի հեռավոր արձագանքների գիտարկումը հայկական ու վրացական ժողովրդական բանահյուսության մեջ և դրա շնորհիվ վերջիններիս որոշ, առաջին հայացքից գրեթե անմեկնելի թվացող, երևույթների բացահայտումը: Ականավոր արևելագետը խուրիներեն *ewri* «տեղ» բառը նախ և առաջ իրավացիորեն տեսել է նուգիի արխիվի անձնանուններում (*Erwiarl*, *Erwihuta*, *Erwialma*, *Kurtip-erwl*, *Ninip-erwl*, *Tešup-erwl* և այլն), Բողազքյոյից հայտնի խուրիներեն մի տեքստում (<sup>d</sup>*Ewri-muša*), ինչպես նաև միջին ասորեստանյան դարաշրջանի մի արձանագրության մեջ (*Ewri-šuharni*, տարբերակ՝ *Ewri-šuhurna*):

Այդ կապակցությամբ Գր. Ղափանցյանի ուշադրության առարկա է դարձել վրաց հողագործի երգերի տառն օրաձև (*ihari Aralo*) օջու օրաձև (*iwri Aralo*) կրկներգը, որի մեջ, նրա կարծիքով, կարելի է տեսնել խուրի-ուրարտերեն *ewri-ewri* «տեղ» և ուրարտերեն *tarae* «հզոր» (շումերական *DAN-NU* գաղափարագրի համազորը) բառերը: Հետևաբար, այդ հինավուրց երգերի «իվրի Արալուն» և «թարի (տա-բերակ՝ թարաի) Արալուն» Գր. Ղափանցյանը առաջարկում է ընկալել որպես «տեղ Արալում» և «հզոր Արալում»: Հատկանշական է, որ այդ *ewri-տեղ* և *tarae-հզոր* բառերը ուրարտացիների գերագույն աստծուն՝ իսադիի և թագավորների մակդիրներն են, այսինքն՝ տեղ է իսադիին և հզոր է թագավորը:

Գր. Ղափանցյանը գտնում է, որ խուրի-ուրարտական *ewri-ewri* նշանավոր լավ է պահպանել հայերենը՝ բառասկզբի *Ե-*ն հնչյունափոխելով «ա»-ի: Նա նկատել է, որ հնչյունափոխության նման երևույթը լայն տարածում ունի հայերենի բարբառներում (ալ-ից և ար-ից առաջ), ըստ որում ինչպես հասարակ բառերում, այնպես էլ հատուկ անուններում. եղբայր-աղբայր, երագ-արագ, եղինջ-աղինջ, Երիզա-Արիզա, Երասխ-Արաքս և այլն: Հայերեն այդ «արի»-ն Գր. Ղափանցյանը որոնել և հայտնաբերել է գրաբարի արեհար-օրեհար «տեղ», արեհանք-օրեհանք «տեղեր», արիորդ-օրիորդ, ինչպես նաև «արիար-օրիարից» սերող «ազատօրեհար» և «ռամիկօրեհար» բարդ բառերում<sup>12</sup>:

Հինարևելյան գիտության համար, այնուհետև, հսկայական նշանակություն ունի Գր. Ղափանցյանի կողմից առաջարկված՝ սեպագիր աղբյուրների *Ururri-Urarri*-ի և Աստվածաշնչի «Արաբատ»-ի մեկնաբանությունը: Այդ մասին նա գրել է. «Այժմ էլ Զեզիրե իբն Օմար քաղաքից քիչ արևելք հիշատակվում են «Ջուդի լեռներ», ուր ասորական և արաբական ավանդությունների համաձայն դադար է առել ջրհեղեղից հետո նոյան տապանը: Հենց այդ գավառն էլ անշուշտ եղել է Ուրուատրին, մանավանդ որ ըստ Աստվածաշնչի՝ Արարատ (= *Urartu* և *Urartu*) անվան հետ է կապվում այդ առասպելը: Աստվածաշնչի մեջ հիշատակվող Արարատը, — շարունակում է Գր. Ղափանցյանը, — այդ բնաշխարհի հետ է կապված և ոչ թե մեր այժմյան Մասիս սարի հետ»<sup>13</sup>:

Մեծանուն գիտնականի այդ հետևությունը լիովին համընկնում է վաղ հայկական աղբյուրների տվյալներին: Ըստ Մովսես Խորենացու Արարադի երկիրը գտնվել է Բաբելոնից հյուսիս «Վաղմեայ տան» մոտ<sup>14</sup>: Իսկ ասորեստանյան սեպագիր աղբյուրների համաձայն, «Վաղմեայ տան» նախատիպը եղել է *Kadmuhi* երկիրը, որը տեղադրվում է Տիգրիսի վերին հոսանքներում, *Kaš(1)jari* (այժմյան Մարդինի) լեռների հյուսիսային փեշերին և նրանից արևելք՝ ընդգրկելով նաև Տիգրիսի ձախափնյա հատվածին

<sup>12</sup> Տե՛ս Գ. Ա. Капанцян. ИЛР, I, Ерван, 1956, с. 465—467.

<sup>13</sup> Տե՛ս Գր. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, էջ 124:

<sup>14</sup> Տե՛ս Մովսեսի Խորենացու Պատմութիւն հայոց. Տիգրիս, 1913, էջ 33 (գիրք I, գլ. Ժ), 34 (գիրք I, գլ. ԺԱ):



առընթեր որոշ տարածքներ<sup>15</sup>։ Հետևաբար, Կադմուխի-Կադմեայ տան հարավ-արևելյան սահմանները հարել են ասորեստանյան սեպագրերի Nibur (այժմյան Ջուդի-դադ) լեռներին, որոնց հետ Փավստոս Բուզանդը նույնացնում է Կորդուք դավառի՝ Աստվածաշնչում հիշատակված Արարագ լեռը<sup>16</sup>։ Ինչ վերաբերում է Մասիսին, ապա Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի սոտ այդ լեռը հանգես է գալիս հենց «Մասիս» անվամբ։

Մի խոսքով, որ կողմից էլ փորձեն մոտենալ ակադ. Գր. Ղափանցյանի Ura:lu — Արարատ արժեքավոր մեկնաբանությանը, լինեն դրանք սեպագիր աղբյուրներ, հայոց հին պատմիչների վկայություններ, թե ասորական ու արարական ավանդություններ, միևնույն է, այդ մեկնաբանությունը ըստ ամենայնի հավաստի է թվում<sup>17</sup>։ Հայկական հասրագիտարանի 12-րդ հատորի «Ուրարտու» հոդվածում ևս, դժբախտաբար անտեսված է աշխարհահռչակ ուրարտագետի և հայագետի այս խորը գիտական մեկնաբանությունը, և Ուրարտուն «Արարատյան թագավորություն» անվամբ տակ նույնացված պատմական Այրարատ նահանգի հետ։ Հանրահայտ է, որ Ուրարտական պետության մայրաքաղաքները Արծաշկու-Արծկեն (կամ Արճեշը), Տուշպա-Տոսպը և Խուսաիիիլիին (Վալի Այգեստանը) չեն գտնվել Այրարատ նահանգի տարածքում։ Իսկ այդ նահանգը, ամբողջությամբ ղեկցրած, երբեք չի եղել Ուրարտուի արմատական տարածք։

Գր. Ղափանցյանի ուրարտագիտությանը բերած նորությունների մեջ յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև Արգիշտի I-ի Սարիղամիշի արձանագրության Աշտուխինի դիտարկումը որպես ցեղանուն։ Մնացած համարյա բոլոր հետազոտողները (Մ. Նիկոլսկի, Գ. Մերեթելի, Գ. Մելիքիշվիլի, Բ. Դյակոսով) այդ ցեղանունը սխալմամբ համարել են քաղաքանուն։ Այստեղ թերևս երբանիկ բացառություն է կազմում անգլիացի Ա. Սեյսը<sup>18</sup>, որի ընթերցումը, սակայն, չգիտես ինչու, հետաքայում պարզապես մոռացության է մատնվել։ Այնինչ Սարիղամիշի արձանագրության մեջ, Աշտուխինից առաջ, երկու դեպքում էլ առկա է սոսկ մի ուղղահայաց սեպ, որը և հանդիսանում է ցեղանվան դետերմինատիվ (որոշիչ)։

Ինչ վերաբերում է առաջարկված «քաղաք» դետերմինատիվին, ապա այստեղ, արձանագրության համապատասխան հատվածներում, բոլորովին տեղ չկա նրա վերականգնման համար։ Բացի այդ, հենց Սարիղամիշի արձանագրության բովանդակությունը ևս աներկբա վկայում է Գր. Ղափանցյանի ընթերցման հավաստիության մասին։ Տեքստը նախ պատմում է, որ Արգիշտին նվաճել է Աշտուխինի ցեղի երկրի Ախուրիանի քաղաքը (haubi URU Ahuriani «Aštuhinei KUR-nini), իսկ մի փոքր ներքևում նաև հա-

վտասում է, որ նվաճվել է Աշտուխինի ընդհանրապես (<sup>m</sup>Aštuhine haubi)։

Գր. Ղափանցյանի ընթերցումը իրեն արդարացնում է նաև այլ տեսակետից։ Ախուրիանի քաղաքը արձանագրության 2-րդ տողում հանդես է գալիս բացարձակ հոլովով, իսկ Աշտուխինի ցեղի երկիրը հաջորդ տողում՝ սեռական հոլովով։ Դա նշանակում է, որ ըստ տեքստի տվյալ դեպքում նվաճվել է մի օբյեկտ՝ Ախուրիանի քաղաքը, որը պատկանել է Աշտուխինի ցեղի երկրին։ Իսկ Գ. Մելիքիշվիլու և այլոց թարգմանությամբ ստացվում է այնպես, որ իբր նվաճվել է երկու օբյեկտ՝ Ախուրիանի քաղաքը և Աշտուխինի քաղաքի երկիրը։ Այնինչ այդպիսի դեպքերում բայը առանձին-առան-

<sup>15</sup> Տե՛ս Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 98—99.

<sup>16</sup> Տե՛ս История Армении Фавстоса Бузанда, Ереван, 1953, с. 20.

<sup>17</sup> Տե՛ս Гр. Капанцян. Историко-лингвистическое значение топонимики древней Армении (այսուհետև՝ ИЛТДА), Ереван, 1940, с. 10.

<sup>18</sup> Այստեղ, ճիշտ է, ցեղանվան դետերմինատիվ է դիտել նաև ավստրիացի Ֆ. Վ. Քյուները, սակայն Աշտուխինի փոխարեն նա առաջարկել է խեղաթյուրված «Կաշկաշուխինի» ընթերցումը։

ձին կրկնվում է նվաճված յուրաքանչյուր օբյեկտի կապակցությամբ<sup>19</sup>։ Ավելին, Ախուրիանի քաղաքի և Աշտուխիների ցեղի երկրի միջև նրանք ոչ մի կապ չեն տեսնում։

Մի խոսքով, ի տարբերություն մյուս հետադոտողների, Գր. Ղափանցյանի եզրահանգումը միանգամայն ճիշտ է. Աշտուխիներն ոչ թե քաղաքանուն են, այլ ցեղանուն։ Իսկ Ախուրիանին ոչ թե անհայտ քաղաք է, այլ, անկասկած, հանդիսացել է հիշյալ ցեղի զբաղեցրած տարածքի (երկրի) կենտրոնը։ Դա նշանակում է, որ այսուհետև ուրարտական արձանագրությունների լիակատար նոր ժողովածուների հրատարակության ժամանակ Աշտուխիներ քաղաքանունների ցանկից անհրաժեշտ է տեղափոխել ցեղանունների շարքը, իսկ Ախուրիանին ոչ թե անորոշ ձևով համարել բնակատեղի Սարիղամիշի շրջանում, այլ որոշակիորեն պետք է նշել, որ այդ բնակատեղին հանդիսացել է Սարիղամիշի շրջանում տեղադրվող Աշտուխիների ցեղին պատկանող երկրի կենտրոնը։

Միանգամայն իրավացի է Գր. Ղափանցյանը նաև այն դեպքում, երբ Սարգուրի II-ի տարեգրության և Ատամխանի արձանագրության լուսխուն համարում է Սևանի ավազանի Տուլիխու քաղաք-պետության արքայի՝ Մինալիբի հայրանունը<sup>20</sup>։ Եվ իզուր են ուրարտական արձանագրությունների վերջին լիակատար ժողովածուների հեղինակները՝ Գ. Մելիքիշվիլին և պրոֆ. Ֆ. Վ. Քյոնիգը շարունակում գիտել այն որպես ցեղանուն։

Գր. Ղափանցյանի հիշյալ տեսակետը հաստատելու և, ընդհակառակը, Գ. Մելիքիշվիլու և Ֆ. Վ. Քյոնիգի կարծիքը հերքելու համար ուրարտական սեպագիր աղբյուրներում առկա են բավական հիմնավոր կոմաններ։ Ուստի պարզապես դիմենք փաստերին։

Նախ դիտարկենք լուսխուն հիշատակող տեքստերը։ Սարգուրի II-ի Ատամխանի արձանագրության համաձայն, օրինակ, ուրարտական թագավորը համառ մարտերում նվաճել է լուսխուի որդի Մինալիբիի Տուլիխու արքայանիստ քաղաքը և դաժանորեն պատժել հիշյալ կառավարչին։ Իսկ Սարգուրիյան տարեգրությունը հիշատակում է, որ հպատակվել են Ուեիկուխի (կարգա՝ Վելիկուխի) երկրի թագավոր Մուրինուն, Տուլիխու քաղաքի երկրի թագավոր Մինալիբին՝ լուսխուի որդին և Ասորեստանի թագավոր Աշշուրնիրարին՝ Ադադնիրարի որդին։ Ինչպես տեսնում ենք, այստեղ ցեղանվան ոչ մի անհրաժեշտություն չի զգացվում, քանի որ ամենուրեք առկա են երկրները և նրանց թագավորները։ Սարգուրիյան տարեգրության մեջ, նույնիսկ, Ասորեստանի թագավոր Աշշուրնիրարին հանդես է գալիս իր Ադադնիրարի հայրանվան հետ միասին, այսինքն՝ ճիշտ այնպես, ինչպես Տուլիխու քաղաք-պետության թագավոր լուսխուի որդի Մինալիբին։

Ինչ վերաբերում է ցեղանուններին, ապա ուրարտական արձանագրություններում նրանք օրինաչափորեն համընկնում են երկրանուններին։ Հմմտ., օրինակ, Արիլիանի երկիր և Արիլիանի ցեղի երկիր, Էրիախի երկիր և Էրիախի ցեղի երկիր, Էրիկուսի երկիր և Էրիկուսի ցեղի երկիր և այլն։ Հետևաբար, անհնարին է, որ երկիրը կոչվի Տուլիխու, ինչպես կարծում են Գ. Մելիքիշվիլին և Ֆ. Վ. Քյոնիգը, իսկ ցեղը՝ լուսխու։

Գր. Ղափանցյանի տեսակետը՝ լուսխուն անձնանուն դիտելու վերաբերյալ, հաստատվում է նաև ուրարտական սեպագիր աղբյուրների նման կարգի այլ տվյալներով։ Ճիշտ մեզ հետաքրքրող Տուլիխուի կառավարիչ լուսխուի որդի Մինալիբիի նման է ուրարտական, նույն թագավորի՝ Սարգուրի II-ի Իզողլուի արձանագրության Շախուի որդի Խիլարուադան, որը Մելիտեա (հայկ. Մալաթիա) քաղաք-պետության կառավարիչն է։ Ուստի ինչպես Շախուն է հանդիսանում Խիլարուադայի հայրանունը, այնպես էլ, բնականա-

<sup>19</sup> Հմմտ. Թերեա, Ցուակերուի Մեհուալի արձանագրության տեքստը՝ karuni ԽErikuabli KUR-nle karuni URU Luḫjunini։

<sup>20</sup> Г. А. Капанцян. ИЛР, II, с. 33.



բար, Լուսիսուն պետք է լինի Մինալիբիի հայրանունը՝ Այնպես, որ երկու ղեկավարում էլ այստեղ առկա են և՛ երկիրը (Տուլիսուն և Մեկիտեան), և՛ թագավորը (Մինալիբին և Խիլարուդան), և՛ նույնիսկ թագավորի հայրանունը (Լուսիսուն և Շախուն)։

Մյուս կողմից, հայտնի է, որ հենց իրենց՝ ուրարտական թագավորների անունները արձանագրություններում, որպես կանոն, հանդես են գալիս հայրանունների հետ միասին։ Դեռ ավելին, չորս Սարգուրիներին, երկու Արգիշտիներին և չորս Ռուսաններին այստեղ միմյանցից մենք տարբերում ենք հենց հայրանուններով, Սարգուրի I-ը, օրինակ, Լուտիպրիի որդին է, Սարգուրի II-ը՝ Արգիշտի I-ի որդին, Սարգուրի III-ը՝ Ռուսա II-ի որդին, Սարգուրի IV-ը՝ Սարգուրի III-ի որդին և այսպես շարունակ։ Ընդունում են նաև, որ Մեկիտեայի թագավոր Խիլարուդան Շախուի որդին է։ Այդ բոլորից հետո զարմանալի չէ, որ Տուլիսուի թագավոր Մինալիբին էլ Լուսիսուի որդին է։

Ուրարտական արձանագրություններում, ընդհանրապես, հանդիպում են այս կարգի շատ տվելի խրթին ընկալվող տեքստեր, որոնք այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում ստանում են իրենց արժանի մեկնաբանությունը։ Այդպիսի տեքստերում հիշատակվում են թագավորները և նրանց արքայանիստ քաղաքները, սակայն բացակայում են երկրանունները։ Հենց դա է պատճառը, որ Սարգուրյան տարեգրության Աբիանին, Իրկուաինին և Ուերդաինին (կարգա՝ Վերդաինի) մինչև վերջերս թուրիմացաբար համարվել են ցեղանուններ, այնինչ դրանք կառավարիչների անուններ են, որոնց համապատասխանաբար պատկանել են էդիա, Իրույա և Իրդուա արքայանիստ քաղաքները։ Հետագայում, Արգիշտ II-ի Սիսիանի սեպագիր արձանագրության հայտնաբերումից հետո, նույնիսկ պարզվել է, որ Սարգուրյան տարեգրության Ուերդաինին եղել է Մուլուկու երկրի (պատմական Մուլուկի) արքան, բանի որ երկու դեպքում էլ (և՛ Սարգուրյան տարեգրության, և՛ Սիսիանի արձանագրության համաձայն) այդ երկրի արքայանիստ քաղաքը (կենտրոնը) եղել է Իրդուան։ Ի դեպ, և՛ Սարգուրի II-ի օրոք Մուլուկուի արքան եղել է Ուերդաինին, ապա նրա թոռան՝ Արգիշտի II-ի օրոք Մուլուկուն, բնականաբար, նոր թագավոր է ունեցել՝ Զադինու անվամբ։

Վերոհիշյալ փաստերի լույսի տակ հստակ երևում է, թե ինչու է Սարգուրյան տարեգրության մեջ Աբիանիի, Իրկուաինիի և Ուերդաինիի կողքին նշվում Պուրիի քաղաքի թագավորի (այստեղ էլ բացահայտվում է թագավորի անունը) ստրկացման և հարկատու դարձնելու մասին։ Այս փաստերի բացահայտումից հետո, ինքնին հասկանալի է, որ իր ուժը հիմնովին կորցնում է ուրարտական արձանագրությունների Իրկուախի-էրիկուախի երկրի (ինչպես նաև համանուն ցեղի) նույնացումը Իրկուաինի անձնանվան հետ<sup>21</sup>։

Մի խոսքով, որ տեսակետից էլ մոտենալու լինենք ակադ. Գր. Ղափանցյանի հորահանգմանը, միևնույն է, այն իրավունք ունի ընդմիշտ զույգատեղելու ուրարտագիտության մեջ. Լուսիսուն, անկասկած, անձնանուն է՝ Տուլիսու երկրի թագավոր Մինալիբիի հայրանունը։ Ուստի այսուհետև, ուրարտական արձանագրությունների լիակատար նոր ժողովածուներում, Լուսիսուն պետք է կայուն տեղ ունենա անձնանունների, բայց ոչ ցեղանունների կամ երկրանունների անվանացանկերում, ինչպես մինչև օրս սխալմամբ այդ արվել է։

Գր. Ղափանցյանի ուրարտագիտական աշխատություններում երբեմն հանդիպում են նաև այնպիսի կռահումներ, որոնք մեծանուն գիտնականը հպանցիկ նշել ու անցել է բոլորովին այլ կարգի հարցերի քննարկման ժամանակ։ Դրանք, ցավոք, առայժմ վրիպել են մասնագետների ուշադրությունը։

<sup>21</sup> Վերոհիշյալ անձնանունների մասին մանրամասն տե՛ս Н. Р. Арутюнян. Записки по урартской эпиграфике.—Древний Восток и мировая культура, М., 1981, с. 76—79.

նից և դուրս մնացել դիտական շրջանառությունից: Դեռ ավելին, ականավոր արևելագետի գրչին պատկանող որոշ կարևորագույն հզորագումներ գիտության մեջ թյուրիմացաբար վերաբերվել են այլ հեղինակներին: Տվյալ դեպքում նկատի ունենք՝ ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակվող **Erikuabi** երկրանվան **Zuaina-Zuani** քաղաքանվան ստուգաբանական աղբյուրները ուշ շրջանի «Որկովիս»-ի և «Զիվինս»-ի հետ:

Էրիկուաի երկրի մասին, օրինակ, Գր. Ղափանցյանը իր մի աշխատության ծանոթագրության մեջ ի միջի այլոց նշում է, որ Արարատի ստորոտում, Իգդիրից ոչ հեռու, եղել է Օրկովի գյուղ, որը կարծես թե նման է ուրարտական տեղանվանը: Սակայն դա կարող է լինել նաև, ինչպես ինքն է ասում, մերկ պատահականություն: Արագածի արգասիք, քանի որ Օրկով անվամբ գյուղ կա նաև Արագածի հարավային ստորոտում<sup>22</sup>, Քիչ հետո կտեսնենք, որ Գր. Ղափանցյանը պարզապես այստեղ ցուցաբերել է ավելորդ զգուշավորություն, այն դեպքում, երբ դա փայլուն մտահղացում է: Հետևաբար, այդ կարևորագույն հզորագումը փաստացի հիմնավորելու համար առաջին հերթին դիմենք ուրարտական սեպագիր աղբյուրներին:

Հայտնի է, որ Էրիկուաի երկրի մասին պատմում են Մենուայի՝ Արարատի հյուսիսային փեշին, Արաքսի աջափնյա հատվածում, Դաշուրուն գյուղի մոտ գտնվող Ցուակերտի ավերակներում հայտնաբերված երկու արձանագրություններ: Դրանց շնորհիվ էլ Էրիկուաի երկիրը մասնագիտական գրականության մեջ իրավագիտորեն տեղադրվել է Արաքսի աջ ափին, Դաշուրունի շրջանում և հարակից տարածքներում:

Եվ բոլորովին պատահական չէ, որ փաստորեն Գր. Ղափանցյանից անկախ համարյա նրա հետ միաժամանակ բազմավաստակ նիկողայոս Ադոնցը ուրարտական սեպագրերի էրիկուա(իս) (կարդա՛լ էրիկվա) երկրանվան մեջ իրավամբ տեսել է Վ դարի հալ պատմիչ Ղազար Փարպեցու մոտ հիշատակվող Մասեաց ուտն գավառի Որկովի գյուղի անունը<sup>23</sup>, Այդ Որկովին այժմ էլ շարունակում է գոյատևել ժամանակակից քարտեզներում Իգդիրից հարավ, Մեծ Արարատի հյուսիս-արևմտյան փեշին՝ Օրկոֆ անվան տակ<sup>24</sup>, Ինչ վերաբերում է ակադ. Գր. Ղափանցյանին ժամանակին անհանգստություն պատճառած համանուն Օրկով գյուղին՝ Արագածի ստորոտում, ապա այստեղ զարմանալի ոչինչ չկա. նոր Օրկովը (Օրգովը) պարզապես Հին Որկովի-Օրկոֆի վերաբնակեցման արգասիք է: Հետևաբար, այս ամենը հիանալի վկայում է այն մասին, որ Գր. Ղափանցյանի կողմից առաջարկված էրի-եուս(իս)-Որկովի-Օրկոֆ համադրությունը ըստ ամենայնի արդարացնում է իրեն: Ուստի այդ հարցի լուծումը Ուրարտուի տոպոնիմիկայում այսուհետև պետք է Էուսի ականավոր գիտնականի անվան հետ:

Նույնը Էարեի է ասել ուրարտական աղբյուրների **Zuaina-Zuani** քաղաքանվան և ժամանակակից **Զիվինի** համադրության մասին. որի լուծմանը Գր. Ղափանցյանը մոտեցել է աստիճանաբար: Իր համեմատաբար վաղ շրջանի աշխատության մեջ նա դեռևս համոզված չի եղել դրանում, ուստի ի միջի այլոց և զգուշավոր (հարցականի տակ) առաջարկել է ուրարտական **Zuaina** **Zuani**-ն համեմատել **Զիվին** գյուղի անվան հետ<sup>25</sup>, իսկ մի փոքր ավելի ուշ նա արդեն կատարյալ համոզմունք ունի, որ ուրարտական արձանագրությունների **Zuaina-Zuani**-ն մեր օրերի **Զիվին**ն է<sup>26</sup>:

Չնայած Գր. Ղափանցյանը իր վերոհիշյալ աշխատություններում հանգամանորեն չի քննարկում **Զուաինա-Զուանի-Զիվին** նույնականության հարցը, սակայն այդ նույնացման համար նա ունեցել է լիարժեք հիմքեր: Այդ

<sup>22</sup> Տե՛ս Գր. Капанцяя, ИЛТДА, с. 51, прим. 3.

<sup>23</sup> Տե՛ս N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, p. 201.

<sup>24</sup> Տե՛ս Н. В. Арутюнян, Топонимика Урарту, с. 260.

<sup>25</sup> Տե՛ս Գր. Капанцяя, ИЛТДА, с. 32.

<sup>26</sup> Տե՛ս Գր. Капанцяя Хаїаса..., с. 181.



կապակցությամբ նախ պետք է նկատի ունենալ, որ Շuainա-ն. որպես Դիաուխի երկրի (պատմական Տայքի) քաղաք, հիշատակվում է Մենուայի սի արձանագրության մեջ, որը հայտնաբերվել է էրզրումի մարզի Խորասան գավառի Յադիլիտաշ (այժմյան էշեկ իլյաս) գյուղում: Զուաինա-Ջիվին համագրության համար կարևոր է Մենուայի մի այլ, պակասավոր արձանագրություն, որը հայտնաբերվել է մեզ հետաքրքրող Ջիվին գյուղում և նրա պահպանված հատվածում տեղեկություններ կան Դիաուխի-Տայքի Շաշիլու քաղաքի նվաճման, ինչպես նաև այդ երկրում արձանագրություն թողնելու մասին: Այս պակասավոր արձանագրությունը, ակներևաբար, նվիրված է Լիել Դիաուխիի հպատակեցմանն ընդհանրապես, բանի որ Շաշիլուն եղել է այդ երկրի կենտրոնը: Ուստի արձանագրության բացակայող հատվածում, ըստ երևույթին, հիշատակված է եղել նաև նույն երկրի մեզ հետաքրքրող Զուաինա քաղաքը, որի հետ և նույնացվում է մեր օրերի Ջիվինը<sup>27</sup>:

Արդիշտի I-ի տարեգրության կրկնօրինակում Զուաինայի տարբերակը՝ Զուանին, ընկանաբար, կրկին հանդես է գալիս որպես Դիաուխի-Տայքի ընկանաբարի Խորխորյան տարեգրությունը միաժամանակ վկայում է, որ Զուանի քաղաքում Արգիշտի I-ը թողել է արձանագրություն, որը սակայն, ուռայժմ չի հայտնաբերվել:

Մի խոսքով, բոլոր առկա փաստերը միահամուռ դալիս են հաստատում Գր. Ղափանցյանի կողմից առաջարկված ուրարտական սեպագիր աղբյուրների Զուաինա-Զուանի նույնացումը ժամանակակից Ջիվինի հետ: Իրա համար էլ ուրարտական դարաշրջանի Զուաինա-Զուանին անկասկած ունհրածնշտ է տեղագրել էրզրումից հյուսիս-արևելք, իսկ Սարիղամիշից՝ արավ-արևմուտք: Գր. Ղափանցյանի այդ կարևորագույն եզրահանգումը իրաժամանակ հիմք է ծառայում հենց Ջիվինի մոտակայքում և հարակից քաղաքներում որոնել Դիաուխի (ասորեստանյան Դայանի) հզոր ցեղային իշխման դրագեցրած վիթխարի տարածքի հարավային սահմանները:

Գր. Ղափանցյանի՝ ուրարտագիտության մեջ ներդրած նորությունները, հարկե, բերված փաստերով ամենեկին չեն սահմանափակվում: Դրանք, անուշա, պետք է դառնան հատուկ ուսումնասիրության առարկա: Ի դեպ, ուռաշին հայացքից մասնակի և կցկտուր թվացող այդ նորությունները անխոնջ փանկանի գրչի տակ տասնյակ տարիների ընթացքում խնամքով հղկված սյն անկյունաքարեր են, որոնցով անթերի ձևավորվել և կերտվել է ուրարտագիտության անառիկ ու հոյակապ շենքը:

Հին Արևելքի պատմության մեջ ակադ. Վ. Վ. Ստրուվեն իրավամբ երեք չի տեսել մանր ու խոշոր հարցեր: Ընդհակառակը, նա գտել է, որ բոլոր հարցերը համահավասար կարևոր են ընդհանուր մեծ պրոբլեմի լուծման համար: Եվ պատահական չէ, որ աշխարհահռչակ ռուս արևելագետի այդ նշաարանը Գր. Ղափանցյանը դարձրել է իր աշխատությունների, մանավանդ Հայաստան հայերի բնօրրան՝ կապիտալ աշխատության ընթացքում:

Սերունդները հավերժ երախտագետ կմնան ակադ. Գր. Ղափանցյանին՝ եպագիր քաղաքակրթության ուսումնասիրությանը նրա մատուցած ծառաությունների համար:

АКАДЕМИК ГРИГОР КАПАНЦЯН И УРАРТОВЕДЕНИЕ

Доктор ист. наук Н. В. АРУТЮНЯН

Резюме

Древневосточная клинописная цивилизация занимает основное место в научных изысканиях академика Г. А. Капанцяна, изучавшего историю и филологию Ассирии

<sup>27</sup> Տե՛ս Н. В. Арутюнян. Топонимика Урарту, с. 83.

<sup>28</sup> Гр. Капанцяна. Хайаса—колыбель армян, с. 8.

и Вавилонии, Хеттского царства и Хайасы, хурритов и урартов. Труды ученого «Хайаса—колыбель армян», «Общие элементы между хеттским и армянским языками», «Суффиксы и суффиксированные слова в топонимике древней Малой Азии», «Хурритские слова армянского языка», «Историко-лингвистическое значение топонимике древней Армении», «История Урарту» и многие другие сыграли значительную роль в изучении древнейшей истории Армении. В монографиях и исследованиях Г. А. Капанцяна нашли отражение такие вопросы истории и филологии Урарту как военно-политическая история и хозяйство, социальные отношения и религия, он занимался расшифровкой и интерпретацией клинописных источников, изучал топонимику и грамматику урартского языка. В статье приведены урарто-армянские лексические общности, а также интерпретация урартских слов *ḫiṣ* — «бросать», «выбрасывать», *gi-ḫiṣe* — «битва», *uṣṭiṣte* — «поход», *Eṣṭiṣiṣa* — «дворец», топонимических и этнических названий Эрикуахи, Зуани, Аштухини и т. д., предложенная заслуженным армянским ученым и нашедшая признание в науке.